ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Աշան-Արմ» ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/214 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
4	Գույնը՝ մուգ կապույտ: Բաճկոն՝ աշնանային տարբերակի կտորը պոլիեսթեր՝ PU (պոլիուրեթան) ծածկով: Ձմեռայինը՝ տաք ներդիրով 300 գր. մակերեսային խտությամբ սինտեպոնով: Աստառը սինտեպոնի հետ կարվում է ուղղահայց և հորիզոնական կարերով (կարերի միջև եղած հեռավորությունը առավելագույնը 7սմ): Բաճկոնները երկարաթև ջրակայուն են, թևի դաստակի հատվածում ներքին շերտը ռեզինե մանժետով: Ունեն 5սմ լայնությամբ ուղղանկյունաձև կանգունակով օձիք, շղթայով և դրա վրայից առաջացող կպչուն փականով: Գրպաններ 2 հատ ներկարված, լուսանդրադարձիչ ժապավեններ՝ գոտկատեղի հատվածում 1 հատ 5սմ լայնությամբ, կրծքավանդակի հատվածում 1 հատ 5սմ լայնությամբ,թևերին՝ նախաբազկի հատվածում 1 հատ 5սմ լայնությամբ, թևի դաստակի հատվածում 1 հատ 5սմ լայնությամբ: Հետևի և դիմացի, կրծքավանդակի հատվածում օգտագործել նախշազարդով տպված կտոր (Սուբլիմացիոն տպագրություն: Ձևը համաձայնեցնել պատվիրատուի հետ): Լոգո՝ ձախ թևին՝ թևանշան «Հասարակական կարգի պահպանության ծառայություն» ասեղնագործած: Կրծքավանդակի ձախ հատվածում ասեղնագործած Երևանի քաղաքապետարանի լոգոն, թիկունքին (լուսանդրադարձիչ ժապավենից ցածր) պետք է ունենա սպիտակ տառերով գրված՝ «Հասարակական կարգի պահպանության ծառայություն» ասեղնագործած (ձևը համաձայնեցնել պատվիրատուի հետ): Քանակը՝ աշնանային՝ 144 հատ, ձմեռային՝ 72 հատ: Տաբատ՝ ձգվող խառնուրդային 65%-պոլիեսթեր, 33%-բամբակ, 2%-էլաստան, թոփի երկարությունը՝ 150սմ: Խտությունը՝ 250-300 gsm: Ներքին շերտ՝ ֆլիսե աստառ (Microfleece 100-200 GSM: Հավասարաչափ ուղղաձիգ, թելով ձգվելու/թուլացվելու հնարավորությամբ: Գոտու հատվածը՝ կանացի՝ միայն հետին 1/2-ը ռեզինով,

	տղամարդկանց համար միայն հետին 1/2-ը ռեզինով: Գրպանները՝ տաբատի արտաքին 2 կողմնային ծավալային գրպաններ՝ կպչուն փականներով, չափը՝ տղամարդկանց համար՝ 24սմx18սմ, կանանց համար՝ 13սմx17սմ: Վերին 2 ներկարված գրպան: Ձախ կողմով թեք լցոնված եզրակար (կարմիր): Քանակը՝ 144 հատ: Վերնաշապիկ՝ կտորը՝ պոլիեսթեր-բամբակ խառնուրդ (65% պոլիեսթեր/35% բամբակ)- 120-160 GSM, երկարաթև: Օձիք՝ միալանջ, ծալովի, կոճակագամով: Կրծքավանդակի ձախ հատվածում ասեղնագործած Երևանի քաղաքապետարանի լոգոն: Հետևի վերևի մասում օգտագործել նախշազարդով տպված կտոր (Սուբլիմացիոն տպագրություն, 65% պոլիեսթեր/35% բամբակ: Ձևը համաձայնեցնել պատվիրատուի հետ): Կրծքավանդակի ձախ և աջ հատվածում գրպաններ, ձախ գրպանը՝ նախշազարդով տպված կտորից (որի վերևում կլինի ասեղնագործած լոգոն): Աջ գրպանի վերևում կպչուն փականով պաշտոնը ասեղնագործած (Ծառայության պետ, Ծ.պ. Տեղակալ, Բաժնի պետ): Լոգոն՝ ձախ թևին՝ թևանշան «Հասարակական կարգի պահպանության ծառայություն» ասեղնագործած: Կրծքավանդակի ձախ հատվածում, գրպանի վերևի մասում ասեղնագործած Երևանի քաղաքապետարանի լոգոն: Թիկունքին (նախշազարդով տպված կտորից ներքև) պետք է ունենա սպիտակ տառերով գրված՝ «Հասարակական կարգի պահպանության ծառայություն» ասեղնագործած (ձևը համաձայնեցնել պատվիրատուի հետ): Ե՛վ տաբատը, և՛ վերնաշապիկը բազմակի լվացման համար, 30°C ջերմակայուն, ինչպես նաև փափուկ, շնչող, մաշկին հաճելի: Վերնաշապիկների քանակը՝ 16 հատ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«Ашан-Арм» ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/214 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
4	